

կամ թէ ազգ մարդկան ըզհետ պընդիցի միշտ կանացարար  
 Ոսկեփայլ կերպարանաց աստուածակերպ իմրն ցնորից,  
 Կամ նման իցէ անառաջնորդ անլոյս մանկանց, որք ի մըթան  
 Բախիցենն այր ընդ ընկերի, և առ կարիսն արտասուիցենն:  
 Եւ թէ յորժամ կորըստականն ժամացոյց դարուց ամաց  
 Հոսիցէ ըզվերջին հատ աւագոյ յիւրմէ ծոցոյն,  
 Հայեցուած մի քոց աչաց, բարբառ մի լոկ քոյոյ ձայնիդ,  
 Հեծութիւն մի ի սըրտէս, մի լոկ նըշան խաչի իմոյ,  
 Կարասցենն ընկնել զվիրագ թերս Յաւոց յաւիտենից  
 Եւ հանել ի ճիրանանց նոցին թափել զազգ երկրածին. —  
 Այս ամենայն յայտնի լիցի, յորժամ ուսեալ գիտասցէ մարդ  
 Ոստի՛ եկեալ ինքն իցէ, և ուր զընալ է հանդերձեալ »:

Օրինակ զայս բարբառէր աստուածեղէն Որդին առ Հայրն,  
 Եւ անկեալ ի վերայ երեսաց՝ կայր ակըն կալեալ.  
 Ուր ուրեմն յարուցեալ՝ «Եղիցին կամք քո, մըրմընջէր,  
 Ո՛չ իմ կամք, այժմ և միշտ և յաւիտեանս ժամանակաց»:  
 Խորին դողումն ի նրմա, և անձկութիւն անբաւ անհուն  
 Յաճախէին զտառապանս յերկարաւոր մեծ տագնապին:  
 Ընդ երկար հայի շուրջ, խընդրէ՛ և ինչ ոչ տեսանէ,  
 Իբրև արձան մահու՝ զգածեալ համակ ի թուխս էին երկինք:  
 Ընդ սիրտ երկրի, որ ունայն կայր ի լուսոյ լուսաւորաց,  
 Եւ ի լուսոյ ևս հոգւոյ, որպէս և կայն և մինչև ցայժմ,  
 Գնային ըրտամունք. — Լու լինէր լոկ ոսնածայն յանտառի անդ,  
 Եւ ջահըն Յուդայի խաղայր շողայր շուրջ ըզվայրօքն : . . . . .

ԱԼՅՐԷՏ ՏԸ ՎԻՆԵՒ

Թարգմ. ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԱՆՆ

ՄԵՌԱՆ ԹԻԹԵԱՆԻԿԸ

« Հ Ա Յ Ր Մ Ե Ր »

Թուփի մը տակ զըտայ զայն դեռ նոր մեռած,  
 Պուս մ'ուզիի թըրթուռուովը սենչոտ՝  
 Որ կը հիծէր վերջին հեցով մը այբոս.  
 Դեռ թըղչելո՞ւ, ապրելու տենչը կար հաս:  
 Ու ակերտու մէջ տացուցի զըզգանցով,  
 Շունչով՝ իր շունչն երկարելու որ ապրէր.  
 Յետոյ մեղմիւ պատկեցուցի ծաղկին քով՝  
 Կոյս մեռնողի սարսուռնեկովը երբի:  
 Իբրը պատանք թերթ մը վարդի դըրի վրան  
 Որ չի փրտաէր ջուսով փափկիկն այն իրան,  
 Ու ես դարձայ՝ մինչ մահն հուլոյս մէջ յածեր,  
 Հոգեվարքի ամբողջ սեւով մը տարտամ.  
 Այ՛, վաղն ալ ծե՛լ կնանցով մ'ես պիտ' երթամ...  
 Ինչպէս թիթեան որ այգ մը լոկ տեսած էր:

« Հայր մեր — ո՛վ սուրբ եթերային խընկոտ վանկ,  
 Քեզ թոթովցե ջըրթունքս իրկուն և աստու.  
 Առաջին բողոք կըրօնիս և խայտանք,  
 Մանուկ սըրտիս ծերուկ Աստուածն էիր զու:  
 Ո՛րքով ցաղցրիկ աղօթեցի ևս քեզմով,  
 Ամեղութիւնս երբ տակաւին բառ մ'եր լեկ.  
 Զիս թևերուդ կը յանձնէի ո՛ւր, մեղմով.  
 Քեզ ունէի ցաւն ասով անողոք:  
 Խունկն էիր զու ժըպիտնեբրուս բուրվառին,  
 Վճեիս ալիքն հոգիիս խո՛ւն վըտակին,  
 Ուր հիմա սե մեղքի բոցեր կը վառին:  
 Ա՛լ չես հընչեր ինչպէս երբեմն հեշտագին,  
 Աղբիւրիդ պէս յըստակ չես գուն, ո՛վ աստուակ.  
 Կը զգամ որ քեզ բազմ է մարդ, ո՛չ հրեշտակ... »

ԱՆՍՐՈՒ

ԱՆՍՐՈՒ